

Արտակ Վարդանյան

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐԵՆԻ ԾՈՒՋ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐԵՆԻԻ ՇՈՒՐՋ

ԵՐԵՎԱՆ



ՀՀ ԳԱԱ ԼԻ

2024

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Վ 301

*Պատասխանատու իմբրագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Գևորգյան
Գրախոս՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վիկտոր Կատվայյան*

Վարդանյան Արտակ Վարդանի
Վ 301 Դիտարկումներ մայրենիի շուրջ: Հոդվածների
ժողովածու / Ա. Վարդանյան.– Եր.: ՀՀ ԳԱԱ Հ.
Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի հրատ., 2024.– 76
էջ:

*Գրքում գետեղված են հայոց լեզվի որոշ հարցերի
և խնդիրների, տարածված սխալների և երկձևություն-
ների շուրջ հեղինակի դիտարկումները, որոնք գիտա-
հանրամասնչելի հոդվածների տեսքով ժամանակին
հրատարակվել են մամուլում:*

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-970-00-4
© Վարդանյան Արտակ, 2024

*Ուսուցչիս և բարեկամիս՝
անվանի լեզվաբան
Ռաֆայել Բշիսանյանի
հիշատակին*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիայի Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, գիտական գործունեությանը զուգահեռ, տասնամյակներ շարունակ ավանդաբար և հետևողականորեն զբաղվել է նաև մայրենի լեզվի մաքրության, կանոնարկման և հարակից հարցերով:

Հիշենք թեկուզ Հայաստանի հանրային հեռուստաընկերության հեռարձակած «Մեր լեզուն, մեր խոսքը» սիրված հաղորդաշարը, որտեղ տարիներ շարունակ մայրենիի շուրջ իրենց մտորումներն ու անհանգստություններն էին ներկայացնում ինստիտուտի առաջատար գիտաշխատողները: Այսօր էլ այդ կարևոր գործը շարունակվում է ինստիտուտի կայքում գործող «Մայրենի», «Կանոնարկում» խորագրերի ներքո հրապարակվող համանման նյութերով:

Ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Արտակ Վարդանյանը, որը շուրջ երկու տասնամյակ ղեկավարել է Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի լեզվական ծառայության բաժինը, հիմնական աշխատանքին զուգահեռ զբաղվել գիտական

աշխատանքով և մայրենիի կանոնարկմանը նպաստող գործունեությամբ, մամուլում հանդես եկել հանրամատչելի ակնարկներով և հոդվածներով, այսօր ի մի բերելով հրապարակված նյութը, ամբողջական ժողովածուով ներկայացնում է իր խոհերն ու նկատառումները մայրենի լեզվի շուրջ:

Գիրքը օգտակար կարող է լինել ինչպես հայոց լեզվի մասնագետների, ուսանողների, ուսուցիչների, այնպես էլ մայրենիի հիմնահարցերը կարևորող ընթերցողների համար:

***Վիկտոր Կատվայյան**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ጸዮርና ፎቃ ማህዘን

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ, ԹԵ՞ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

Ողջունելի է, որ օտար լեզուներում առկա *սամ-վիթ* («պետությունների ղեկավարների ժողով») քաղաքական եզրույթը վերջին տարիներին գտավ իր հայեցի ձևը. մեր լեզուն հարստացավ ևս մեկ բառով: Շատերին է տարակուսանքի մեջ գցում, սակայն, միմյանցից թեկուզև մեկ հնչյունով տարբերվող այս երկձևությունը:

Իսկապես, գագաթաժողով, թե՞ գագաթնաժողով:

Բանն այն է, որ հին հայերենի՝ բառավերջի *ն* ունեցող բառեր (*մատն, ձեռն, ձուկն, մուկն, գագաթն, ասեղն, էալթն, տասն* և այլն) պարունակող համադրական բարդությունները գրաբարում գրեթե անխտիր կազմվել են *ն*-ի պահպանմամբ՝ *աղեղնաւոր, մատնացոյց, տասնապատիկ, էալթնաղի, առատաձեռն, բոկոտն* և այլն:

Ժամանակակից գրական հայերենում նույնպես այդ կանոնը գործում է, մանավանդ բարդությունների առաջին եզրում՝ *ձկնկիթ, մկնդեղ, ուսումնասեր, կողմնացոյց, կաթնատուն, յոթնամյակ, հարսնաքույր, բեռնատար, ասեղնաբուժություն, աստամնաբուժարան, ձեռնագնդակ, ոտնագնդակ* և այլն: Կանոնը, իհարկե, սակավաթիվ որոշ բացառություններում խախտվում է

(*նտաբոբիկ, սերմացու, ձեռագործ* և այլն), սակայն օրինաչափը *ն*-ի պահպանումն է:

Հետևաբար, առավել հայեցի, առավել ավանդական կազմությունը *գագաթնածողովն* է, որին էլ անհրաժեշտ է նախապատվություն տալ: Ինչպես չենք ասի *գագաթակետ, գագաթամաս, գագաթակողմ, գագաթասլաց, գագաթահայաց*, այլ համապատասխանաբար կասենք *գագաթնակետ, գագաթնամաս, գագաթնակողմ, գագաթնասլաց, գագաթնահայաց*, այնպես էլ պետք է ընտրենք *գագաթնածողովը*, այլ ոչ թե *գագաթածողովը*:

1997

ՀՐԱՎԵՐՐԸ ԴԵՌԵՎՍ ՀՐԱՎԵՐՔ ՉԷ

Ժամանակ առ ժամանակ մեր լեզվում ի հայտ եկող առանձին սխալների կողքին երբեմն-երբեմն երևան են գալիս նաև իմաստով կամ հնչմամբ մոտ բառերի չարաբաստիկ գույգեր, որոնք, սխալ կիրառվելով միմյանց փոխարեն, շատերին տարակուսանքի մեջ են գցում, իսկ սխալը հետզհետե առավել է խորանում և տարածվում:

Օրինակ՝ չնայած լեզվաբանների և մանկավարժների երկարամյա ջանքերին, դեռևս առկա է *հնազիտություն* և *հնէաբանություն* բառերի հայտնի շփոթը: Բոլոր բացատրական բառարանները հստակ բացատրում են, որ առաջինը *արխեոլոգիան* է՝ հին ժողովուրդների կենցաղի ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը, իսկ երկրորդը՝ *պալեոնտոլոգիան*՝ հնագույն ժամանակաշրջաններում գոյություն ունեցած և անհետացած կենդանիների ու բույսերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը, այնուամենայնիվ, սխալը շարունակում է գոյատևել:

Նման նորահայտ շփոթ է առաջացել նաև երկու այլ բառերի միջև. երբեմն միմյանցից չեն զանազանվում *հրավեր* և *հրավերք* բառերը:

Հրավեր, կրկին ըստ բացատրական բառարանների, նշանակում է՝ «մի տեղ գնալու, մի բանի ներկա լինելու կամ մասնակցելու առաջարկ» (հարսանիքի հրավեր, համերգային շրջագայության հրավեր, պարի հրավեր և այլն), իսկ *հրավերք* նշանակում է՝ «հյուրասիրություն, խնջույք»: Սակայն անհասկանալիորեն *հրավերի* փոխարեն մամուլը, հեռուստատեսությունն ու ձայնասփյուռը մեծ մասամբ կիրառում են *հրավերք* բառը:

Օրինակ՝ մեր ճանաչված երգչուհիներից մեկը իր հեռուստատեսային ելույթում, փոխանակ ասելու՝ «հրավերներ ունեմ մի քանի երկրներից», ասում է՝ «հրավերքներ ունեմ մի քանի երկրներից», իսկ մեկ այլ հեռուստահաղորդման ողջ ընթացքում մեկնաբանը և մասնակիցները *հրավեր* բառի փոխարեն նախանձելի համերաշխությամբ կիրառում են բացառապես *հրավերք* բառը՝ զարմանալիորեն «շփոթվելով» և գոնե մեկ անգամ ճիշտ ձևը չօգտագործելով...

Սակայն, ինչպես *գիր* բառի փոխարեն սխալմամբ չենք ասի *գիրք*, այնպես էլ չպետք է շփոթենք բոլորովին այլ իմաստներ արտահայտող *հրավերն* ու *հրավերքը*...

1992

ՏԱՈՒՇ, ԹԵ՞ ՏԱՎՈՒՇ

Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հյուսիսային այս գավառը, որին համապատասխանում է «Աշխարհացույցի» Տուս գավառանունը, սկսած 9-րդ դարից, հիշատակվում է *Տավուշ (Տաւուշ)* ձևով:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի վարչատարածքային միավորների և բնակավայրերի վերանվանումների հանձնաժողովի միանգամայն ողջունելի և շնորհակալ գործունեությամբ այսօր մեր ժողովրդին են վերադառնում ժամանակին հանիրավի փոփոխված և նրանից ապօրինաբար իսկված պատմական անունները: Օտար, անբարեհունչ, աղավաղված ձևերի փոխարեն կյանքի են կոչվում հայեցի, բարեհունչ Աշոցքը, Տաշիրը, Վայքը, Կապանը, Արմավիրը...

Սակայն, թե ինչպես Շամշադինի շրջանը իր պատմական Տավուշ անունը վերստանալու փոխարեն ստացավ կեղծ և պակասավոր Տաուշ ձևը, շատերիս համար է հանելուկ: Եվ առավել զարմանալին այն է, որ մամուլն ու հեռուստատեսությունը երկու տարի շարունակ նախանձելի եռանդով գործածում են այդ սխալ ձևը:

Բանն այն է, որ այս տեղանունը միջնադարի մեր պատմիչների՝ Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես

Դրասխանակերտցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի և այլոց աշխատանքներում, Հայկական հանրագիտարանում, «Հայ ժողովրդի պատմություն» կաճառային բազմահատորյակում և այլուր հիշատակվում է բացառապես *Տավուշ (Տաւուշ)* ձևով: Ավելին, հին հայերենում *սու* երկբարբառ չի եղել, հետևաբար հնչյունների նման անբնական հերթագայությամբ կազմված հայերեն բառի, մասնավորապես բնիկ հայկական տեղանվան գոյությունն իսկ ոչ միայն խիստ կասկածելի է, այլև, թերևս, անհնարին:

Եվ քանի դեռ չի արմատավորվել խորթ, օտար Տաուշը, անհրաժեշտ է ուղղել սխալը, մանավանդ որ Տավուշ ձևը բոլորովին էլ նորությունն չէ. վերոհիշյալ պատմական սկզբնաղբյուրներից գատ՝ միշտ էլ կիրառվել և մեր օրերում էլ կիրառվում են *Տավուշի լեռնաշղթա*, *Տավուշ բերդ*, *Տավուշ գետ* պատմաաշխարհագրական անունները:

1992

ՉԱՂԱՎԱՂԵՆՔ ՄԵՐ ՄԱՐԶԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունն այսօր նախկին 37 շրջանների փոխարեն ունի ընդամենը մեկ տասնյակ տարածքային նոր միավորներ՝ մարզեր:

Տարիներ առաջ, երբ ի թիվս Հանրապետության մի շարք այլ բնակավայրերի՝ անվանափոխվեց Հայկական ԽՍՀ Շամշադինի շրջանը, Գերագույն խորհրդի համապատասխան հանձնաժողովի թյուրիմացությամբ պատմական հայտնի *Տավուշ* անվան փոխարեն շրջանը ստացավ *Տաուշ* սխալ ձևը: Այդ մասին տողերիս հեղինակը երկու անգամ հանդես եկավ մամուլում («Երկիր» օրաթերթ, 20 մայիսի 1992թ., «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 6 ապրիլի 1994թ.) և ուշադրություն հրավիրեց վրիպակի վրա: Հրապարակումներից հետո մամուլի որոշ միջոցներ սկսեցին կիրառել *Տավուշ* ճիշտ ձևը, սակայն շրջանի պաշտոնական անունը շարունակեց *Տաուշը* մնալ: Միայն ճշտվեց միայն 1995 թվականի նոյեմբերին, երբ Ազգային ժողովն ընդունեց, այնուհետև Հանրապետության նախագահը ստորագրեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրա-

պետության օրենքը, որով նախագծում նախատեսված «Տաուշի մարզը» դարձավ «Տավուշի մարզ»:

Մարզի անվան պաշտոնական ճշտումից տարիներ են անցել, սակայն սովորույթի ուժով շատերը Տավուշի *վ* հնչյունը լիարժեք չեն արտասանում, իսկ եղանակի տեսությունը ներկայացնող հեռուստահաղորդավարուհիներից շատերը ուղղակի ցուցադրաբար ընդգծում, ավելին՝ գովազդում են սխալ ձևը՝ արտասանության շեշտն էլ անհասկանալիորեն դնելով *ա* հնչյունի վրա:

Աղավաղման «բախտի» արժանացած հաջորդ մարզանունը *Գեղարքունիքն* է: *Գեղեցիկ* և *արքունի* արմատներից կազմված այս հիբրավի գեղեցիկ և արքայական պատմական անունը երբեմն (կրկին մեր հաղորդավարուհիների շուրթերին) արտասանվում է... *Գեղարքունիկ*: Ամենայն հավանականությամբ դա արվում է մարզանունը բարեհունչ արտասանելու «բարի» մղմամբ, սակայն դժվար չէ նկատել, որ միանգամայն հակառակն է ստացվում:

Փոքրիկ մի թյուրիմացություն է Վայոց ձորի հետ է կապված: Հաճախ այդ տեղանվան երկու բաղադրիչն էլ գրվում է մեծատառով՝ Վայոց Ձոր, այնինչ տերմինաբանական կոմիտեի՝ բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածությունը կանոնակարգող՝ տարիներ առաջ ընդունած որոշմամբ՝ աշխարհագրական այն բաղադրյալ հատուկ անունները, որոնցում լրացյալն առանձին վերցրած հատուկ անուն չէ, միայն առաջին

բառն է գրվում մեծատառով: *Վայոց ձորը*, բնականաբար, նույնպես պետք է ենթարկվի լեզվական այս կանոնին:

Հաճախ հանդիպող մի անճշտություն էլ Լոռու մարզի անվան հետ է կապված: Մարզանվան սեռական հոլովաձևը կազմում է մի քանի՝ *Լոռու, Լոռվա, Լոռիի* ձևերով: Նախապատվելին, սակայն, *Լոռու* ձևն է, հիշենք թեկուզ մեծն Թումանյանի հայտնի պոեմների «Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց...», «Խոսում են Լոռու հին-հին քաջերից...» տողերը: Ուստի ուղղագրության-ուղղախոսության միասնականությունն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել այս ձևը, որը, ի դեպ, մի քանի տարի առաջ նույնպես կանոնակարգվել է լեզվի պետական տեսչության համապատասխան որոշմամբ:

1999

ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՆԱԽԱԳԱՀ, ԱՏԵՆԱՊԵՏԸ՝ ԱՏԵՆԱՊԵՏ

Վերջին տասնամյակում հայերենը, բնականաբար, ավելի է հարստանում պետական կառավարման, դիվանագիտական, իրավագիտական, տնտեսագիտական և այլ ոլորտների վերաբերող նորանոր բառերով ու եզրույթներով: Ոչ միայն ստեղծվում են նոր բառեր, այլև ճշտվում են հների իմաստային նրբությունները, կրկին շրջանառության մեջ են դրվում մոռացվածները:

Նման բառերից է *նախագահը*, որի նախկին իմաստներին ավելացել է հանրապետության ղեկավարի (պրեզիդենտի) իմաստը: Վերջին յոթ-ույթ տարվա ընթացքում այնքան է ամրապնդվել բառի նոր իմաստը, որ դեռևս երբեմն-երբեմն կիրառվող *պրեզիդենտ* բառը առնվազն ժամանակավրեպ և անսովոր է հնչում:

Այս առնչությամբ, սակայն, փոքրիկ մի նկատառում: Բացի *նախագահից*, հայերենն ունի իմաստով նրան գրեթե համարժեք *ատենապետ* բառը, որն «ատյանի նախագահ» նշանակությամբ օգտագործվել է մեր լեզվի հին շրջաններում և «հասարակական կազմակերպության, մարմնի, ժողովի նախագահ» նշանակությամբ այսօր էլ կիրառական է արդի գրական արևմտահայերենում, մասամբ էլ՝ արևելահայերենում:

Ոչինչ չի խանգարում, սակայն, որ միանգամայն բարեհունչ և միարժեք իմաստ արտահայտող այս բառը լիարժեք կիրառում գտնի նաև ժամանակակից գրական արևելահայերենում, մանավանդ որ դրանով կտարբերակվեն «հանրապետության նախագահ» և «հասարակական կազմակերպության, մարմնի, ժողովի նախագահ» բառիմաստները:

Այսպիսով, բառիմաստի նեղացմամբ (որը լեզվի զարգացման միանգամայն օրինաչափ երևույթ է) *նախագահ* բառին թողնելով միայն օտար *պրեզիդենտ* բառի իմաստը և մնացած դեպքերում կիրառելով նրա հոմանիշ *ատենապետը*՝ մեր լեզվի երկու բարեհունչ, ավանդական բառերի իրավունք կտանք գործածվել միմյանց «չխանգարելով»՝ նախագահը՝ որպես նախագահ, ատենապետը՝ որպես ատենապետ:

1998

ՏՆՏԵՍՎԱՐՈՂ, ԹԵ՞ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏ

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» *տնտեսավարել* բառի դիմաց մեկնում է. «Իբրև տնտես կառավարել, տնտեսական գործերը կառավարել», իսկ *տնտեսվար* բառի դիմաց նշում է. «Հապավում տնտեսության վարիչ բառերի»: Համանման բացատրություն է տալիս նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»:

Ժամանակակից պաշտոնական հայերենում, մասնավորապես՝ տնտեսագիտական, իրավաբանական տեքստերում զուգահեռ օգտագործվում են ն՝ *տնտեսավարող սուբյեկտ*, ն՝ *տնտեսվարող սուբյեկտ* եզրույթները, ընդ որում՝ միևնույն իմաստով, միևնույն համատեքստում: Ցավալին այն է, որ այս եզրույթի հիշյալ տարբերակները համակիրառվում են նաև Հայաստանի Հանրապետության օրենքներում և այլ իրավական ակտերում, մասնավորապես՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում սահմանված է. «Տնտեսվարող սուբյեկտ՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցիչ, ներկայացուց-

չություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ, առևտրային ցանց... ֆիզիկական անձ»:

Մակայն այս երկու ձևերից ո՞րն է համապատասխանում այս սահմանմանը, և ո՞րը՝ ոչ, անկախ նրանից, թե դրանցից որն է առավել վաղ օգտագործվել: *Տնտեսվարել*, փաստորեն, նշանակում է «տնտեսության վարիչ լինել», մասնավորապես՝ «դպրոցի կամ այլ հիմնարկի տնտեսվարը լինել», իսկ *տնտեսավարել*՝ «տնտեսական գործերը կառավարել»: Բնականաբար, քանի որ օրենսդրության մեջ խոսքը տնտեսություն վարող հիմնարկության կամ ֆիզիկական անձի մասին է, ուրեմն ճիշտը միանշանակ երկրորդ տարբերակն է: Ուստի իրավական ակտերի վերանայման պարագայում անհրաժեշտ է երկձևությունները փոխարինել մեկ միասնական եզրույթով՝ *տնտեսավարող սուբյեկտ* բառակապակցությամբ:

2023

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՆՉԵՑՈ՞Ց, ԹԵ՞ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ

Ղազանչին կամ Շահկերտը Նախիջևանի Երնջակ գավառի այն նշանավոր գյուղն է եղել, որտեղ Պարսկաստանի Հեյդարկուլի խանի դեմ 1750 թվականին բարձրացված խոշոր ապստամբությունից հետո բնակիչների զգալի մասը գաղթել է Շուշի, որտեղ հաստատված շահկերտցի իշխանական տոհմերն էլ կառուցել են բերդաքաղաքի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ նշանավոր եկեղեցին, Խանդամիրյան թատրոնը և այլ նշանավոր կառույցներ:

Սակայն, հաճախ մամուլում և հեռուստատեսությամբ շրջանառվում է Շուշիի վիրավոր տաճարի անվանման մի տարօրինակ տարբերակ՝ Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցի, այսինքն՝ եկեղեցու ճիշտ անվան փոխարեն հիշատակվում են միայն կառուցողները, այն էլ ակամա «սրբադասված» կարգավիճակում:

Ժողովուրդը բազմաթիվ սրբատեղիների անվանումների փոխարեն երբեմն կիրառում է նրանց տեղադրման վայրերի անվանումները. օրինակ՝ Երևանի Սուրբ Հովհաննես եկեղեցու փոխարեն երբեմն ուղղակի ասում են Կոնդի եկեղեցի, Աղթամարի Սուրբ Խաչ

եկեղեցու փոխարեն՝ Աղթամարի եկեղեցի և այլն: Երբեմն էլ սրբավայրերը հիշվում են իրենց կառուցողների անուններով. Անիի Սուրբ Գրիգոր եկեղեցին ավելի շատ հիշատակվում է նրա կառուցողի՝ Տիգրան Հոնենց հարուստ առևտրականի անունով՝ Տիգրան Հոնենցի եկեղեցի, Աբուղամրենց Սուրբ Գրիգորը՝ Աբուղամրենց եկեղեցի և այլն:

Հիշյալ սրբավայրերի մասին խոսելիս, սակայն, երբևէ չեն ասում Սուրբ Կոնդի եկեղեցի, Սուրբ Աղթամարի եկեղեցի, Սուրբ Տիգրան Հոնենցի կամ Սուրբ Աբուղամրենց եկեղեցի: Ուստի Շուշիի մայր տաճարն էլ պետք է անվանել Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի կամ Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի և ոչ թե Սուրբ Ղազանչեցոց եկեղեցի, քանզի ղազանչեցիները ոչ թե սրբեր են եղել, այլ եկեղեցի կառուցող բարեգործներ:

2021

ԶՆԱԲԵՐՈՂ ԹԵ՞ ԱԶՆԱԲԵՐՈՂ

Բնիկ հայկական տարածք Նախիջևանը Ադրբեջանին բռնակցվելուց հետո այդ հանրապետության վարած հայտնի հայատյաց քաղաքականության հետևանքով իսպառ հայաթափվեցին հայոց պատմական հայրենիքի այդ նշանավոր հատվածի շուրջ յոթ տասնյակ հայաբնակ գյուղերն ու քաղաքները:

Երկրամասի՝ մինչև 1988-ը պահպանված միակ խոշոր հայաբնակ բնակավայրի բախտը վիճակված էր մոտ 2000 մարդ բնակչությամբ Ազնաբերդ գյուղին:

Ազնաբերդը (բարբառով՝ *Ըզնաբերդ*, սխալ գրությամբ՝ *Ջնաբերդ*, օտար անվանմամբ՝ *Ազնաբյուրդ*) տեղադրված էր Վայքի լեռնաշղթայի հարավային ստորոտին, պատմական Վասպուրական աշխարհի Նախճավան գավառի հյուսիսում՝ Նախիջևան քաղաքից 35 կիլոմետր հյուսիս-արևմուտք: Գյուղի տարածքը գտնվում էր պատմական Վասպուրական, Սյունիք, Այրարատ աշխարհների մի յուրօրինակ հանգույց-հրվանդանում:

Գյուղի անունը ստուգաբանվում է հին հայերենի *ազն* («ցեղ, ազգ, տոհմ, սերունդ») և *բերդ* արմատներով, բառացի նշանակում է «ազգի բերդ», «ցեղի բերդ», «տոհմաբերդ»: Այս ստուգաբանությունը այնքան միանշանակ է, որ միանգամայն անիմաստ են դառնում ստուգաբա-

նությունների այլ փորձերը (օրինակ՝ Ընծաբերդ, Ձնաբերդ և այլ ձևերից բխեցնելը): Ի դեպ, բնիկ հայկական Ազնաբերդ անունը կրող աշխարհագրական այլ անուններ էլ են եղել պատմական Հայաստանի տարբեր գավառներում (օրինակ՝ բերդ և գյուղ Չորրորդ Հայք աշխարհի Հաշտյանք գավառում, հնավայր Տարոն աշխարհի Սասուն գավառում, լեռ Սյունիք աշխարհի Արևիք գավառում):

Բնակավայրի անվանումը անցյալի պատմաաշխարհագրական, ազգագրական, տեղագրական բնության հեղինակավոր ուսումնասիրողների (Ղևոնդ Ալիշանի, Երվանդ Լալայանի և այլոց) երկերում, պատմաբան Արզամ Այվազյանի՝ Նախիջևանի պատմությանն ու հուշարձաններին նվիրված աշխատանքներում, հայկական հանրագիտարաններում, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների քառահատոր բառարանում բացառապես հիշատակվում է Ազնաբերդ ձևով: Սակայն քսաներորդ դարի սկզբներից, հավանաբար դպրոցի ոչ տեղացի ուսուցիչների և հոգևորականների կողմից, շրջանառության մեջ է դրվել *Ձնաբերդ* սխալ ձևը (ըստ երևույթին նրանք շփոթել են գրաբարի *զ* նախդիրով ձևերի գրության և արտասանության հետ՝ զգհինի-*ըզզհինի*, զհաց-*ըզհաց* և այլն):

Գրության այս աղավաղված ձևի ի հայտ գալու պատճառն այն է, որ Ազնաբերդի խոսվածքում անշեշտ *ա* ձայնավորը վերածվում է *ը*-ի (առավոտ-*ըռավոտ*, արածել-*ըրածիլ*, աղանձել-*ըղանձիլ*, արիշտա-*ըռըշտա*,

Արիստակես-Շորստակյես, Աղավնաձոր-Շղնածոր և այլն): Ահա այս նույն օրինաչափությամբ էլ գրաբարյան *Ազնաբերդ* ձևը բարբառում դարձել է *Ըզնապեռթ*, որից էլ թյուրիմացաբար առաջացել է *Ջնաբերդ* ձևը. սա սխալ է այն առումով, որ կարդացվում է ոչ գոնե բարբառային *Ըզնաբերդ* արտասանությամբ, այլ անորոշ և իմաստագուրկ *Ջրնաբերդ* ձևով (ինչպես *զմուռու-զրմուռու*, *զնդան-զրնդան*, *զնգալ-զրնգալ* և այլն):

Այսպիսով, գյուղանվան գրական ճիշտ ձևը *Ազնաբերդն* է, բարբառային ձևը՝ *Ըզնաբերդը*, իսկ գրության մյուս ձևերը (*Ջնաբերդ*, *Ազնաբյուրդ*, *Ազնաբյուրտ*, *Ազնաբիրթ* և այլն), անշուշտ, սխալ են, աղավաղված կամ օտարահունչ:

1989

ՊԱՐՈՆ, ԹԵ՞ ՏԻԱՐ

Հայոց նորանկախ պետության կայացմանը զուգընթաց՝ մեր լեզուն հարստանում է նորանոր բառերով, եզրույթներով, երևան են գալիս հայեցի նոր ձևեր, վերականգնվում են մոռացված ավանդական ձևերը: Նման դրսևորումներից է նաև պարտադրված և բռնազբոսիկ *ընկերից* հրաժարվելու և վերջապես ազգային հարգալից դիմելաձևերը կրկին կյանքի կոչելու երևույթը:

Սակայն, եթե հայերենում կանանց հարգալից դիմելու ավանդական ձևը միանշանակորեն *տիկիին* է (աղջիկներին դիմելու *օրիորդ* ձևի հետ համատեղ), ապա տղամարդկանց հարգալից դիմելու ձևերը, ինչպես հայտնի է, երկուսն են: *Պարոնը* ավանդվել է միջնադարից՝ կիլիկյան շրջանից, փոխառված է հին ֆրանսերեն *բարոն* բառից, որ նշանակել է *իշխանավոր, տեր*: Սակայն մեր լեզվում անհիշելի ժամանակներից կիրառվում է մեր սեփական *տեր* բառը, որի հետ նույնարմատ է տղամարդկանց դիմելու երկրորդ ձևը՝ *տիարը*: Նրանց նախնական ձևը եղել է *տէայրը* կամ *տիայրը* (*տէ* կամ *տի* («մեծ») + *այր*), ինչպես որ *տիկիին* բառի նախնական ձևն է եղել *տէկիինը* (*տէ* կամ *տի* + *կին*):

Այսօր տղամարդկանց դիմելու վերոհիշյալ երկու ձևերն էլ կիրառական են. *պարոնը* հիմնականում պաշ-

տոնական-ծառայողական ոլորտներում է կիրառվում, իսկ *տիարը*՝ հոգևորականության շրջանում, մասամբ էլ կրթական համակարգում:

Մոտավորապես հավասարագոր այս հոմանիշներից ապագայում, անշուշտ, կհաղթի մեկը, սակայն, էլնելով նրանից, որ *տիարը* մեր լեզվի հնավանդ բառերից է, հետևաբար և նրա ավելի հարագատ գավակը, միաժամանակ ավելի բարեհունչ է, քան որոշ իրավիճակներում երբեմն գավեշտական հնչող՝ բարոնական ծագումով *պարոնը*, բառային այս երկձևությունը ճիշտ կլիներ վերացնել հոգուտ *տիարի*:

1995

ԱՅՂ ՉԱՐԱԲԱՍՏԻԿ «ԱՅԼՈՔ»

Մերօրյա հայերենով հնչող ելույթներում, հաղորդումներում հաճախ երևան է գալիս առաջին հայացքից աննշան թվացող, բայց իրականում կոպիտ լեզվական մի սխալ: Խոսքը վերաբերում է *այլ* անորոշ դերանվան հոգնակի ձևին:

Ինչպես հայտնի է, *այլ* դերանվան հոգնակին կազմվում է իր եզակի ձևից և գրաբարի *ք* հոգնակերտով՝ ստանալով *այլք* ձևը: Վերջինիս սեռական հոլովը, ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում, անշուշտ, *այլոցն* է (ինչպես, օրինակ, *Հայք-Հայոց*, անձինք-*անձանց*, Վարդանանք-*Վարդանանց* և այլն): Մակայն անհասկանալի օրինաչափությամբ սեռական հոլովի համաբանությամբ հաճախ *այլք* ուղղականի փոխարեն օգտագործվում է *այլոք* սխալ, ոչ գրագետ ձևը. փոխանակ ասելու՝ «Այսինչը, Այնինչը և այլք», ասում են՝ «Այսինչը, Այնինչը և այլոք»:

Ցավոք, հաճախ «այլոքասիրությամբ» համակվում են ոչ միայն շարքային մարդիկ, այլև հայտնի լրագրողները, հաղորդավարներն ու մեկնաբանները, բանասիրական բարձրագույն կրթությամբ մարդիկ, որոնք երբևէ *Հայքի* փոխարեն չեն ասի *Հայոք* և *անձինքի* փոխարեն՝ *անձանք*: Սխալը նաև վարակիչ է և առավել

տարածվելու միտում ունի, ուստի, ուշադիր լինենք մայրենիի հանդեպ նաև այս դեպքում:

1997

ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՄՈՌԱՑՎՈՂ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայոց ազգային խոհանոցը մեր ժողովրդի ստեղծած հազարամյա արժեքների անբաժան մասն է և աշխարհի հնագույն ու հարուստ խոհանոցներից մեկը: Նրա մասին գրվել և հրատարակվել են հայ և օտար բազմաթիվ հեղինակների գրքեր ու մենագրություններ: Ռուս նշանավոր խոհանոցագետ-ուսումնասիրող Վիլյամ Պոխլեբկինը իր «Աշխարհի ժողովուրդների ազգային խոհանոցները» գրքում նշել է, որ հայկական խոհանոցը Ասիայի տարածքի ամենահին խոհանոցն է և աշխարհի հնագույն խոհանոցներից մեկը, թեև ավելի ուշ ժամանակաշրջաններից ավանդական շատ կերակրատեսակներ կրում են օտար անուններ: «Հայկական խոհանոցի բնորոշ գծերը ձևավորվել են Ք.ա. առնվազն մեկ հազարամյակ առաջ՝ հայ ժողովրդի ձևավորման ընթացքում և շատ առումներով պահպանվել ավելի քան երեք հազարամյակ՝ մինչև մեր օրերը», - գրում է Պոխլեբկինը:

Հայկական ուտեստների ամենակիրառական եգրություններից են կաթնամթերքների ավանդական անվանումները, որոնց մի մասը մեզ է հասել հազարամյակների խորքից: Սակայն մեր օրերում երբեմն մոռացվում են որոշ կաթնամթերքների ավանդական անվանումները:

րը՝ դրանց փոխարեն օգտագործվելով օտար կամ աղավաղված անուններ:

Հում սերը անհիշելի ժամանակներից հայոց մեջ անվանվել է *արածան*, որի բարբառային ձևերն են՝ *ըրէժան*, *ըրածան* և այլն: Սակայն վերջին տարիներին որտեղից-որտեղ կաթնամթերք արտադրող ընկերությունների արտադրանքում համերաշխորեն հայտնվել են «Ռեժան» մակագրությամբ արածանի տուփերը:

Սակայն, ինչպես արիշտա արտադրող ընկերությունը իր արտադրանքի վրա չի գրի «Ռշտա», այլ՝ «Արիշտա», այդպես էլ «Ռեժանի» փոխարեն, անտարակույս, պետք է գրել դասական «*Արածան*» տարբերակը:

Հաջորդ կաթնամթերքը, որի անունը ուղղակի անհարկի մոռացության է մատնվել՝ տեղը զիջելով օտար «Ռիկոտտա» անվանը, որքան էլ զարմանալի է, հայկական հնագույն և հայտնի մի կաթնամթերք է՝ *լոռը*, որը ստացվում է թեթևակի թթվեցված և մակարդված կաթից կամ թարմ պանրաջրից:

Հայերս վաղնջական ժամանակներից խնոցու թանից կամ մաճնաթանից ստացել ենք թթվաշ *շոռը* կամ *մաճնաշոռը*, իսկ կաթից՝ քաղցրավուն *լոռը* կամ *կաթնալոռը*: Ուստի ճիշտ կլինի, եթե լոռ արտադրող արտադրանքի վրա օտար և ճոճոան «Ռիկոտտա» բառի փոխարեն գրվի ուղղակի «*Լոռ*»:

2023

ԳԵՂԵՑԿՈՒՂԻՉԻ՞, ԹԵ՞... «ՄԻՍ»

Ոչ ոք չի ժխտում, որ մեր լեզուն իրավունք ունի կիրառելու նաև օտարամուտ նոր բառեր ու եզրույթներ, եթե դրանց հայերեն համարժեքները դեռևս չեն ստեղծվել կամ չեն ճշտվել:

Այսպես, տարիներ շարունակ հայերենը կիրառում էր օտար *մինիստր* բառը, մինչև դրա փոխարեն հետագայում սկսեց օգտագործվել պատմական *նախարար* բառը՝ իմաստի որոշակի փոփոխությամբ: Տասնամյակներ շարունակ օտար *ռևոլյուցիա*, *կոնստիտուցիա*, *ռեսպուբլիկա* և այլ բառերը հանիրավի ճնշում էին համապատասխանաբար *հեղափոխություն*, *սահմանադրություն*, *հանրապետություն* և այլ հայեցի ձևերը, մինչև տերմինաբանական կոմիտեն վերջապես լուծեց նաև այս հարցը:

Սակայն, երբեմն մեր լեզվի մեջ օտար բառեր են հայտնվում ցավալիորեն միանգամայն անհարկի: Օրինակ՝ վերջերս շատ են ասում *շոու*՝ փոխանակ ուղղակի ասելու *ներկայացում*, ասում են *կոմերցիա*՝ փոխանակ ասելու առևտուր, ասում են *բիզնեսեն*՝ փոխանակ ասելու *գործարար* և այլն:

Օտարամոլության նման անցանկալի դրսևորում է նաև վերջին տարիների գեղեցկության մրցույթների անցկացմանը զուգահեռ մեր լեզվում կիրառվող «Միսս Հայաստան» շինծու արտահայտությունը: Հայերենում այդ բառակապակցությունը ամենաշատը կարող է նշանակել «Օրիորդ Հայաստան», այսինքն՝ կարող է հասկացվել, որ խոսքն ընդամենը Հայաստան անունով մի օրիորդի մասին է: Ի դեպ, հայկական հեռուստա-ալիքներից մեկի զավեշտ-հաղորդման հերոս եղբայրը «Միսս Հայաստանին» մասնակցել ցանկացող քրոջն ասում է. «Ա՛յ աղջի, վրադ մի՞ս կա, որ մրցույթի ես գնում...»: Սա ցույց է տալիս, որ անհարկի ներմուծված օտար բառը հայախոս մարդը բնականաբար ընկալում է այլ իմաստով: Եվ դժվար չէ կոտակել, որ «Միսս Հայաստանը» ապօրինաբար զավթել է «Հայաստանի գեղեցկու-հի» պարզ, հայեցի, բարեհունչ ու բոլորին հասկանալի բառակապակցության տեղը, որ այն միանգամայն ան-հարկի փոխառություն է:

Մի խոսքով, հիրավի գրավիչ և գեղեցիկ այս մրցույթը կազմակերպողներին (որոնց խանդավառ աշ-խատանքը միանգամայն ակնհայտ է և գնահատելի) ա-ռաջարկում ենք մրցույթը, հետևաբար և հաղթողին այսուհետ անվանել «Հայաստանի գեղեցկուհի», իսկ վե-րոհիշյալ օտար բառը թողնել անզլերենին և դրա կարիքը զգացող այլ լեզուների:

ՊԱՀՊԱՆԵՆՔ... ՄԵՐ ՀԱՅՐԱՆՈՒՆՆԵՐԸ

Առաջին հայացքից զավեշտական թվացող այս վերնագրի տակ շարադրվածը պետք չէ հումորով ընդունել, քանի որ մեր հայրանունները տասնամյակներ շարունակ, իրոք, աղավաղվել են: Բանն այն է, որ հայերենից ռուսերեն տառադարձելիս, չգիտես ում հորինած «չգրված օրենքով», հայկական հայրանունների ավանդական *h* վերջավորությունը փոխարինվում է ռուսերենի *ովիչ (ովնա)* վերջավորությամբ: Սա մի երևույթ է, որի համանմանը չես գտնի աշխարհի ոչ մի լեզվի, լեզվաբանական ոչ մի օրենքի կամ կանոնի մեջ:

Իսկապես, մի թե ծիծաղելի չէ պատկերացնել, որ ասենք չինացին իր անուն-հայրանուն-ազգանվան ազգային ձևը անգլերենում ներկայացնի անգլերենի կանոններով, ռուսերենում՝ ռուսերենի, արաբերենում՝ արաբերենի...

Օտար Այսինչ Այնինչովիչ (Այնինչիչ), Այսինչ Այնինչովնա (Այնինչիչնա) ձևերը, ի դեպ, գոյություն չեն ունեցել ո՛չ սլավոնական, ո՛չ հնդեվրոպական այլ լեզուներում. ըստ մասնագետների՝ դրանք ընդամենը... մոնղոլաթաթարաթրքական լեզուներից ռուսերենին անցած ձևեր են: Եվ զարմանալիորեն այս խորթ և մերժելի

ձևի «գայթակղությունից» անմասն չեն մնացել նաև մեր մտավորականները, վաստակաշատ լեզվաբանները: Այս հարցում էլ պատվախնդիր է գտնվել պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանը. միայն նրա հեղինակած գրքերի տպագրական տվյալների էջերում կարելի է հանդիպել ռուսերեն ճիշտ տառադարձված հայկական հայրանվան:

Մեր ժողովրդի համար բեկումնային նոր ժամանակներում, երբ առավել գործուն է հայոց լեզվին բնորոշ ինքնահստակեցման և ինքնամաքրման երևույթը, որի հետևանքով առավել հայեցի, առավել բարեհունչ են դառնում նաև մեր տեղանուններն ու անձնանունները, վերահայացվում են նույնիսկ օտարահունչ ազգանունները, չպետք է մոռանալ նաև մեր հայրանունների մասին: Անկախ այն բանից, թե ինչ լեզվով է տառադարձվում հայկական հայրանունը, պետք է պահպանել նրա միասնական, ավանդական, հայեցի ձևը: Եվ այս կանոնը, բնականաբար, պետք է իր հստակ իրավաբանական ձևակերպումը գտնի Հայաստանի Հանրապետությունում:

1991

ՀԱՆԻՐԱՎԻ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ հայերենի շատ բառեր թեք, ածանցավոր ձևերում կամ բառաբարդման մեջ բառաշեշտի տեղափոխության հետևանքով կրում են շեշտակորույս վանկի ձայնավորի փոփոխություն կամ սղում: Ընդ որում, շեշտափոխական հնչյունափոխության ենթարկվում են հատկապես *ի, ու* և *է (ե)* ձայնավորները, սակավ՝ *ա*-ն և *օ (ո)*-ն: Օրինակները բազմաթիվ են՝ երկիր-*երկրի*, սիրտ-*սրտաճմլիկ*, ստրուկ-*ստրկական*, ձուկ-*ձկնեղեն*, մուգ-*մգանալ*, սեր-*սիրային*, գեր-*գիրանալ*, վեմ-*վիմազրություն*, ինչպես նաև կոճակ-*կոճկել*, քաղաք-*քաղքենի*, որկոր-*որկրամոլ* և այլն:

Հայոց լեզվին խիստ բնորոշ հնչյունափոխության այս կանոնին ենթարկվում են նաև որոշ հատուկ անուններ՝ Դավիթ-*Դավթի*, Մկրտիչ-*Մկրտչի*, Սարգիս-*Սարգսի*, Հովհաննես-*Հովհաննիսյան*, Խաչատուր-*Խաչատրյան*, Մովսես-*Մովսիսյան*, Գալուստ-*Գալստյան*, Շահեն-*Շահինյան* և այլն: Հիշենք, որ գրաբարում ոչ միայն հասարակ անուններն են ավելի մեծ հաճախականությամբ հնչյունափոխվում (սենեակ-*սենեկի*, վարագոյր-*վարագուրի*, խարոյկ-*խարուկի*, զէն-*զինու*, ալիւր-*ալեր*, տեր-*տեառն*, քոյր-*քեռ*, օր-*աւուր*, գիւղ-*գեղջ*,

լեառն-լերին և այլն), այլն բազմաթիվ անձնանուններ ու աշխարհագրական անուններ ենթարկվում են ավանդական-պատմական այս հնչյունափոխությանը՝ Աստղիկ-Աստղկան, Անահիտ-Անահտայ, Բարսեղ-Բարսղի, Սանատրուկ-Սանատրկոյ, Որմիգդ-Որմգրոյ, Շապուհ-Շապհոյ, Կարին-Կարնոյ, Մծբին-Մծբնայ և այլն:

Սա նշանակում է, որ շեշտափոխական հնչյունափոխությունը հայերենին խիստ բնորոշ է եղել դեռևս մեր լեզվի զարգացման վաղ փուլերում և, բնականաբար, շարունակում է գործել նաև ժամանակակից հայերենում:

Չնայած այս իրողությանը՝ մեր որոշ հայրենակիցներ (նրանց թվում՝ նաև ճանաչված մտավորականներ, պաշտոնատար անձինք) սեփական նախաձեռնությամբ իրենց ազգանունները անձնագրերում գրանցել են տալիս արհեստականորեն վերականգնված-չհնչյունափոխված ձևով՝ *Գալուստյան, Ներսեսյան, Խաչատրյան, Մովսեսյան* և այլն՝ նման մոտեցումը հիմնավորելով որպես իրենց նախապապի կամ նախանախապապի անվան գրության հանդեպ նախանձախնդրություն:

Սակայն, չպետք է մոռանալ, որ նախնիների անունները հարգելուց առաջ անհրաժեշտ է առաջին հերթին նախանձախնդիր լինել մայրենիի, նրա օրինաչափությունների և ավանդույթների հանդեպ, այլապես մեր հայեցի ազգանունների ճիշտ ձևերի կողքին դեռ երկար կգոյատևեն նրանց «այլընտրանքային» գուգաձևություն-տարբերակները:

2006

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԻ ՎՐԻՊԱԿԻ ՄԱՍԻՆ

Ինչպես հայտնի է, ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցը հայոց այբուբենի 34-րդ տառն անվանել է *Վյուն*, որի մեծատառ և փոքրատառ տառապատկերներն են՝ *Բ* և *ւ*: Գրաբարում այս տառին տարբեր դիրքերում տարբեր հնչյուններ են համապատասխանել, գրեթե նույն օրինաչափություններն են պահպանվել նաև ժամանակակից գրական արևմտահայերենում, իսկ ժամանակակից գրական արևելահայերենում, խորհրդային ուղղագրությանն անցնելուց հետո, առանձին հնչյուն չի համապատասխանում, քանի որ այս տառին հատկացվել է միայն *ա* տառի երկրորդ բաղադրիչի դերը:

Եվ ահա, մեսրոպյան այս գրին վիճակված նման տխուր ճակատագրի հետևանքով, մամուլում, ամենատարբեր մակարդակների տպագիր փաստաթղթերում, հրատարակություններում և տպագիր լեզվի այլ դրսևորումներում հաճախ ի հայտ է գալիս մեծատառի և փոքրատառի շփոթ: Օրինակ՝ «Ուղևորները մեկնում են Ուրալ» նախադասությունը տպագրված է լինում «ՈԻղևորները մեկնում են ՈԻրալ» ձևով, իսկ, ասենք, «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇԸ» գլխագիրը՝ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇԸ» ձևով: Ցավա-

լին այն է, որ այսպիսի սխալներ նկատվում են անգամ...
որոշ այբբենարաններում...

Գուցե աննշան թվացող, բայց իրականում բավա-
կան կոպիտ և արտասովոր այս վրիպակը, որ անգամ
զուտ գեղագիտական տեսանկյունից էլ խրախուսելի չէ,
բացառելու համար ուղղակի պետք է հարգենք մեսրոպ-
յան մեր հնամյա այբուբենը և միշտ հիշենք, որ *Վյունը*
նույնպես տառ է, և որ փոքրատառ բնագրում բնակա-
նաբար պետք է նրա փոքրատառը՝ չ գրվի, իսկ գլխա-
տառում՝ մեծատառը՝ *Ի*:

1997

ՅԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՐՄԿԱԿԱՆ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայերս և պարսիկները միևնույն՝ հնդեվրոպական-արիական արմատներն ունեցող դրացի և ցեղակից ժողովուրդներ ենք: Թեև այսօր տարբեր կրոններ ենք դավանում, մեր ժողովուրդների լեզուներում, մշակույթներում, արժեհամակարգերում դժվար չէ գտնել բազմաթիվ ընդհանրություններ, նմանություններ, փոխառություններ:

Այսպիսի ընդհանրություններից է նաև մեր և պարսիկների ազգանունների *յան* վերջավորությունը: Միանգամից ասենք, որ և՛ հայերենում, և՛ պարսկերենում ազգանվանակերտ այդ վերջավորության հիմքում երկու լեզուներում էլ առկա հոգնակի թիվը կազմող միևնույն *ան* կամ *յան* վերջավորությունն է: Պարսկերենում այսօր էլ շատ կիրառական է այդ հոգնակերտ վերջավորությունը՝ դոխտար («աղջիկ») - *դոխտարան* («աղջիկներ»), մահի («ձուկ») - *մահիյան* («ձկներ»), խոդա («աստված») - *խոդայան* («աստվածներ») և այլն: Ժամանակակից գրական հայերենը չի պահպանել այս հոգնակերտը, սակայն այն կիրառական է եղել հին հայերենում (գրաբարում)՝ խորդ («կռունկ») - *խորդեան*

(«կունկներ»), թուղթ - *թղթեան* («թղթեր»), բերդ - *բերդեան* («բերդեր») և այլն, որի հիմքով էլ ձևավորվել է հայկական ամենատարածված ազգանվանակերտ մասնիկը:

Ի դեպ, *յան* վերջավորությամբ ազգանունների ծագման մեկ այլ վարկած էլ կա. հնարավոր է, որ այն *յան* վերջավորությամբ ածականական որոշիչն է, որն առկա է ինչպես հայերենում (Կովկաս-*կովկասյան*, արևելք-*արևելյան*, երեկո-*երեկոյան*, Թորգոմ - *Թորգոմյան*), այնպես էլ պարսկերենում (Իրան-*իրանյան* («իրանական», փարթ («պարթև») - *փարթյան* («պարթևական»), Աշքան («Արշակ») - *Աշքանյան* («Արշակունի») և երկու լեզվում էլ ունի նաև սեռական հոլովի գործառույթ:

Թվում է՝ ամեն ինչ պարզ է և հստակ, սակայն պարսկական ազգանունները հայերեն տառադարձելիս հեռուստատեսությամբ և մամուլում հաճախ են հանդիպում իրանական ազգանունների արհեստածին *իան* վերջավորությամբ տառադարձումներ՝ *Աբդոլլահ-իան*, *Հադիդիան*, *Ֆարշիան* և այլն, իսկ որ առավել զավեշտական է՝ *Ռեզահիան*, *Փուրյաիան*, *Ռաֆիիան...* Ձայնավորների նման առատ կուտակումները, ի դեպ, ամեննին բնորոշ չեն ո՛չ պարսկերենին, ո՛չ էլ հայերենին: Թեև պարսկերենում *ի* և *յ* հնչյուններին համապատասխանում է միևնույն Յ («յե») գիրը, այնուամենայնիվ Ն-ով ազգանունները միանշանակ հնչում են *յան*, ուստի *յան*-ով էլ պետք է տառադարձել, ինչպես, ի

դեպ, տառադարձում ենք Հայաստանում ապրող մեր եզդի և քուրդ հայրենակիցների ազգանունները՝ Սլոյան, Ուզոյան, Մամոյան և այլն:

Մի ծանոթ լրագրողի հարցրի՝ ինչո՞ւ եք իրանական ազգանունների *յան*-ը հաճախ *իան*-ով տառադարձում, չէ՞ որ իրանական մյուս ժողովուրդների՝ մեր հայրենակից քրդերի և եզդիների համանման ազգանունները միշտ էլ *յան*-ով է տառադարձվում: Նա առանց վարանելու պատասխանեց. «Որպեսզի տարբերվեն մեր ազգանուններից»: «Բայց ինչո՞ւ պետք է տարբերվեն, եթե իրականում նույնն են և նույն կերպ էլ արտասանվում են»,– փորձեցի առարկել: Զրուցակիցս ժպտաց, չգիտեմ՝ համոզվե՞ց, թե՞ ոչ:

Հայ և իրանցի ժողովուրդները ապրում են ժողովուրդների բարեկամության օրինակելի մի ժամանակաշրջան՝ հարգում են միմյանց մշակույթն ու ինքնությունը, վերականգնում միմյանց պատմամշակութային հուշարձանները, թարգմանում և հրատարակում գրականության մեծերին և այլն: Ուրեմն նաև պահպանենք և չաղավաղենք հայ-իրանական հազարամյակների բարեկամության և եղբայրության խորհրդանիշներից մեկը՝ մեր ընդհանուր *յան* ազգանվանակերտ վերջավորությունը:

2023

ՀԱՆՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՀԱՅԵՐԵՆԻ

ԵՐԿՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՇՈՒՐՁ

Աշխարհի շուրջ 240 պետություններն ունեն իրենց պաշտոնական ամբողջական և համառոտ անվանումները: Ամբողջական անվանումները սովորաբար կազմվում են երկրի անունից և տվյալ պետության կառավարման ձևը ցույց տվող բառից. օրինակ՝ Հունաստանի Հանրապետություն, Իսպանիայի Թագավորություն, Անդորրայի Իշխանություն, Օմանի Սուլթանություն, Իսրայելի Պետություն, Իրանի Իսլամական Հանրապետություն և այլն: Որոշ երկրներ էլ ընտրել են իրենց անվանման միայն համառոտ տարբերակը. օրինակ՝ Վրաստան, Կանադա, Ուկրաինա, Թուրքմենստան, Գրենադա, Ճապոնիա և այլն:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ երկրանունների հայերեն տառադարձման մեջ, որ հատկապես կարևոր է դարձել Հայաստանի անկախացումից ի վեր՝ արտաքին առավել լայն շփումների պայմաններում, նկատվում է ոչ միասնականություն. օրինակ՝ *Ֆրանսիայի Հանրապետություն* ձևի կողքին ոչ միայն մամուլում, այլև պաշտոնական փաստաթղթերում երբեմն կիրառվում է նաև *Ֆրանսիական Հանրապետություն* ձևը, *Արգենտինայի Հանրապետության* կողքին՝ *Արգենտինյան Հանրապե-*

տությունը, Իտալիայի Հանրապետության կողքին՝ Իտալական Հանրապետությունը և այլն: Երբեմն սա բացատրվում է երկրի ինքնանվանմամբ (բնօրինակ լեզվում երկրի անվանմամբ), երբեմն էլ այլ լեզուներում (ռուսերենում, անգլերենում) տվյալ երկրանվան տառադարձմամբ:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այլ լեզուներում երկրանունները կազմվում են իրենց լեզվի ընձեռած հնարավորություններով և օրինաչափություններով, օրինակ՝ պարսկերեն բնօրինակում Իրանի Իսլամական Հանրապետության անվանման բառացի թարգմանությունն է՝ *Իրան Իսլամական Հանրապետության* (Ջոմհուրիե Էսլամիե Իրան), արաբերեն բնօրինակում Եգիպտոսի Արաբական Հանրապետությանը՝ *Եգիպտոս Արաբական Հանրապետություն* (Ալ Ջոմհուրիա Միսր ալ Արաբիա), Մարոկկոյի Թագավորությանը՝ *Մարոկկոյական Թագավորություն* (Ալ Մամլաքաթ ալ Մադրիբիա), բուլղարերեն բնօրինակում Բուլղարիայի Հանրապետությանը՝ *Բուլղարիա Հանրապետություն* (Ռեպուբլիկա Բըլգարիա): Այս և համանման բազմաթիվ այլ օրինակներ ցույց են տալիս, որ բնօրինակ լեզվով առաջնորդվելը միանգամայն սխալ է: Ինչ վերաբերում է անգլերենից կամ ռուսերենից «թարգմանելու» միջոցով հայերեն երկրանուններ կազմելուն, ապա դա նույնպես ակնհայտորեն սխալ է և անբնական, քանի որ այդ լեզուները երկրանունները տառադարձում են իրենց լեզվի օրինաչափություններով, որոնք կիրառելի չեն

հայերենի համար: Ուստի բնական է, որ երկրանունները պետք է հայերեն տառադարձել միայն հայերենի օրենքներով:

Սակայն, ինչպես վերը նշվեց, հայերենում կիրառվում են երկու հիմքով կազմված երկրանուններ՝ սեռական հոլովի գոյականական որոշիչով և ածականական որոշիչով: Ո՞րն է դրանցից ավելի ճիշտը և հայեցին:

Միանգամից ասենք, որ հայերենին առավել բնորոշ է առաջինը: Հիշենք թեկուզ ավանդական-պատմական *Հայոց աշխարհ*, *Վրաց աշխարհ*, *Ալանաց երկիր*, *Քուշանաց երկիր* և այլ ձևերը, որոնցում համապատասխանաբար առկա են *Հայք*, *Վիրք*, *Ալանք*, *Քուշանք* երկրանունների սեռական հոլովները: Բացի այդ, ածականական որոշիչով ձևերը ցույց են տալիս պետությունների կառավարման բնույթը. օրինակ՝ *Միրիայի Արարական Հանրապետություն* երկրանվան մեջ «արարական» բառը ցույց է տալիս, որ այդ հանրապետությունը արարական բնույթի հանրապետություն է, *Իրանի Իսլամական Հանրապետություն* երկրանվան մեջ «իսլամական» բառը շեշտում է այդ երկրի հանրապետական կառավարման մեջ իսլամի ավանդույթների գերակայությունը և այլն:

Այսպիսով, երկրանունների հայերեն տառադարձման միակ ճիշտ սկզբունքը սեռական հոլովի գոյականական որոշիչով տառադարձումն է՝ *Հունաստանի Հանրապետություն*, *Աֆղանստանի Պետություն*,

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն և այլն:

Այս սկզբունքով էր Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի արձանագրային և թարգմանչական բաժնում կազմվել և հրապարակվել «Աշխարհի երկրանունների ցանկը» («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 3 սեպտեմբերի 1995թ.): Ողջունելի է, որ նույն սկզբունքով է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման վարչության կողմից հետագայում կազմվել և լեզվի պետական տեսչության կողմից հաստատվել «Երկրների անունների դասակարգիչը», որը կոչված է կարգավորելու խնդրին առնչվող երկձևություններն ու անճշտությունները:

1999

ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՏՈՀՄԻԿ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Մեր տեղանունների վերահայացումը, ավանդական-պատմական անունների վերականգնումը մեր լեզվի ինքնամաքման դրսևորումներից է: Հայոց լեզուն ոչ միայն ժամանակ առ ժամանակ թոթափում է օտար, անբարեհունչ բառերը, այլև ազատվում է օտարածին տեղանուններից:

Այսօր մեզ այնքան հարազատ են Տավուշ, Վանաձոր, Տաշիր, Գյումրի, Կապան, Աշոցք, Արմավիր անունները, որ չենք էլ պատկերացնում, թե ընդամենը մի քանի տարի առաջ նրանց փոխարեն գործածել ենք Շամշադին, Կիրովական, Կալինինո, Լենինական, Ղափան, Ղուկասյան, Հոկտեմբերյան ձևերը:

Անկախության առաջին իսկ տարիներից Հայաստանի Հանրապետության խորհրդարանում գործում էր տեղանունների հանձնաժողով, որի կատարած շնորհակալ աշխատանքի շնորհիվ Հայաստանի քարտեզն այսօր մաքրվել է մեր ականջին խորթ շատ տեղանուններից:

Թվում էր՝ արդեն պատմության գիրկն են անցել օտարների կողմից մեզ պարտադրված՝ մեր ներաշխարհին խորթ անունները: Սակայն իրականում մեր հանրա-

պետության բնակավայրերի այսօրվա ցանկում դեռևս կան զգալի թվով օտարահունչ տեղանուններ: Այսպես, Արագածոտնի մարզում կան Ղափաղթափա, Բայսգ, Ջամշու կոչվող գյուղեր, Շիրակում՝ Գյուլլիբուլաղ, Ղազանչի, Վայոց ձորում՝ Սալլի, Կոտայքում՝ Կորչլու, Սյունիքում՝ Աղբուլաղ, Ղուրդղուլաղ, Մուսավամ, Ղզլջուղ, Հաջաթին, Վերին և Ներքին Գյոդակլուններ և այլն, Լոռիում՝ ոչ միայն Յաղդան, Քիլիսա, Հայդարլու և նման այլ անուններով գյուղեր, այլև անհասկանալիորեն թուրքահունչ անուն կրելու ճակատագրին դատապարտված ամբողջ երեք քաղաքներ՝ Ախթալա («սպիտակ բացատ»), Շամլուղ («տճուտ») և... Ալավերդի («Աստվածատուր», ավելի ճիշտ՝ «Ալլահի տված»)... Եվ մի՞թե զարմանալի չէ, որ ամենայն հայոց բանաստեղծին աշխարհ բերած երկրամասը մեր օրերում չեն այցելում անգամ հայրենի տեղանունները բարեհունչ դարձնելու շնորհ պարզևող համեստ մուսաներ...

Ի դեպ, Հայաստանի թուրքական ծագումով տեղանունների «գլուխգործոց» Ալավերդու մասին: Մամուլում տարբեր տարիներ հոդվածների ամբողջ շարք տպագրվեց քաղաքն անվանափոխելու առաջարկներով՝ Աստուր, Մանես, Ձորափոր... սակայն անունը չփոխվեց: Եթե հարմար անուն հնարավոր չէ գտնել, մի՞թե բնակիչների համաձայնությամբ անհնարին է քաղաքն անվանակոչել թեկուզ մեր մեծերից որևէ մեկի անունով...

Վերջին տարիներին տեղանունների վերանվանման գործընթացը հստակեցրեց նաև այն սկզբունքները,

որոնցով պետք է առաջնորդվել բնակավայրերի անունները հայացնելիս. առաջին հերթին պետք է ձգտել վերականգնել տվյալ տեղանվան ավանդական-պատմական ձևը, իսկ եթե բնակավայրը հին չէ, կամ չի պահպանվել նրա պատմական անունը, պետք է անվանել նորաստեղծ, բարեհունչ, սակայն ոչ կաղապարված անվամբ՝ խուսափելով անճշտություններից ու թյուրիմացություններից: Այստեղ, անշուշտ, մեծ դեր ունեն տեղական կառավարման մարմինները և տեղի մտավորականությունը:

Հիշենք, որ տարիներ առաջ Աբովյանի շրջանի գյուղերից մեկը՝ Թեջրաբազը, վերանվանվեց Ձորաղբյուր: Գուցե հայեցի, բարեհունչ էր նոր անունը, սակայն, շատերի կարծիքով, շինծու էր և Հայաստանի խորհրդային տարիների հորինովի տեղանունների միօրինակությունը ևս մեկով լրացնող: «Օտարածին» տեղանունից այդքան հապշտապ ազատվողների մտքով իսկ չանցավ, որ հինավուրց այդ անունն իր մեջ պահպանում էր ավանդական, հայեցի ձև: Եվ միայն տարիներ անց պարզվեց, որ գյուղն անցյալում կոչվել է... Տաճարաբակ, իսկ Թեջրաբազը նրա աղավաղված, օտար ձևն է:

Մի քանի տարի առաջ ճիշտ նույն կերպ վերանվանվելու վտանգի տակ էին հայտնվել նաև Վայոց ձորի Զեյթա, Ալայազ, Գյումուր, Սյունիքի Շուռնուխ գյուղանունները: Սակայն մեզ հաջողվեց «Գրական թերթում» հրապարակած (26 հոկտեմբերի 1990թ.) հոդվածով կասեցնել անհարկի անվանափոխումները՝

ապացուցելով, որ նշված տեղանունները համապատասխանաբար պատմական Ձեղեա, Եղեգիս, Գոմք և Շոռնոխ տեղանունների՝ օտարների կողմից աղավաղված կամ բարբառային ձևերն են:

Ուստի, հայոց զույգ հանրապետությունների բնակավայրերի անունները ճշտելիս բոլորովին հարկ չկա անխտիր օտարածին համարելու նախկինում թուրքաբնակ բոլոր բնակավայրերի անունները, այլ անհրաժեշտ է առաջին հերթին պարզել՝ արդյո՞ք դրանց տակ թաքնված չեն հնավանդ, հայեցի ձևեր: Եվ եթե այսօր չճանաչենք հայաբնակ մեր տարածքների բնակավայրերի արմատները, ապա վաղը պետք է ընդհանրապես օտար համարենք ճակատագրի բերումով օտարի ձեռքին մնացած Խաղիսաղը (Ղազախ), Աղստևը (Աղստաֆա), Շահապոնքը (Շահբուզ), Ագուլիսը (Այլիս), Ջուղան (Ջուլֆա), Նախիջևանը (Նախչվան), Գանձակը (Գյանջա), Գետաբեկը (Գյադաբայ), մեր տոհմիկ բնակավայրերի հին ու հարազատ մյուս անունները:

Հայոց տեղանունները մեր հազարամյա պատմությունն են, մեր հոգևոր աշխարհի արտացոլանքները, ուրեմն երկյուղածությամբ և խնամքով վարվենք նրանց հետ:

1997

ՀԱՅԿԱԿԱՆ Է ԱՐԴՅՈՔ ԼԱՉԻՆՏԵՂԱՆՈՒՆԸ

Մեծ Հայքի Սյունիք աշխարհի գավառներից մեկը հայոց հնագույն աշխարհագրական-տիեզերագիտական ձեռնարկ «Աշխարհացույցը» հիշատակում է *Աղահեճք* անվամբ: Հետագա դարերում, ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով, այն բաժանվել է երկու ենթագավառների՝ Քաշաթաղի և Խոժոռաբերդի:

Այսօրվա Լաչինի շրջանը իր տարածքով լիովին համապատասխանում է *Աղահեճք* գավառին, սակայն Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դար) «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության վերջում բերված՝ Սյունիքի 12 գավառների եկեղեցական հարկացուցակում Աղահեճի 43 բնակավայրերի մեջ չկա Լաչին անունը կրող կամ հնչմամբ նրան մոտ որևէ բնակավայրի անուն: Միակ պատմական տեղանունը, որի հետ կարող է կապ ունենալ Լաչինը, հենց *Աղահեճ* կամ *Աղահեճք* գավառանունն է:

Այս ենթադրությունը հիմնավորելու համար պարզենք, թե ինչ տեսքով կարող էր մեզ հասած լինել Աղահեճ անունը, եթե գավառի տարածքում պահպան-

ված լինել տեղական բարբառով խոսող հնաբնակ հայ բնակչությունը:

Սյունիք-Արցախի խոսվածքներին բնորոշ է անշեշտ վանկերի ձայնավորի, հատկապես երեք և ավելի վանկերով բառերի բառասկզբի *ա* ձայնավորի անկումը (ինչպես՝ *ածելի-ծիլի*, *ապսպարել-պսպարել*, *աղաչանք-ղաչանք*, *անոթի-նոթի* և այլն): Հայ բարբառներին, նաև գրական հայերենին բնորոշ է *լ-ղ* լծորդությունը (ինչպես՝ *տիլ-տիղմ*, *ջիլ-ջիղ*, *լինել-եղնել*, *բլոճ-բղոճ*, *անալի-աղի*, *մառախլապատ-մառախուղ*, անձնանուններից՝ *Լազար-Ղազար*, *Ալեքսանդր-Աղեքսանդր*, տեղանուններից՝ *Եղեգիս-Ալայազ* և այլն):

Հաշվի առնելով հնչյունափոխության այս օրինաչափությունները՝ կարող ենք ենթադրել, որ *Աղահեճը* Սյունիքի բարբառում ունեցել է *Լահեճ* ձևը, իսկ, օրինակ, «Գնում է *Աղահեճի* ձորը» նախադասությունը բարբառում կարող էր հնչել. «Քյինամ ա *Լահեճին* դարան»: Սեռական հոլովի հենց այս՝ *Լահեճին* ձևից էլ դժվար չէ բխեցնել օտար-աղավաղված *Լաչին* ձևը (*Լահեճին* > *Լահճին* > *Լաճին* > *Լաչին*): Հնչյունափոխության այս վերջին աստիճանին, կարծում ենք, նպաստել է նաև ժողովրդական ստուգաբանությունը՝ թուրքերեն *լաչըն* («բազե») բառի նմանությամբ: Եվ քանի որ Արցախ-Սյունիքի բարբառին խորթ չէ նաև այդ բառի *լաչին* («բարձրահասակ, սլացիկ») համանունը, վերջինս ընդունվել է նաև տեղաբնիկների կողմից:

Ի դեպ, այս *Աղահեճ-Լաչին* անցման հավաստիության մասին են խոսում նաև միևնույն կաղապարով հնչյունափոխված՝ հայկական տեղանունների մի ամբողջ շարք կազմող համանման նախադեպերը՝ *Եղեգիս-Ալայազ, Ողոհի (Աղահեցիկ)-Ալահի, Ուղտիք (Ոքաղե)-Օլթի* և այլն:

Այսպիսով, առաջին հայացքից օտարահունչ թվացող *Լաչին* տեղանունը իր մեջ ամենայն հավանականությամբ պահպանել է հայկական հնավանդ գավառանունը, ուստի ուղիղ կապ ունի նույն տարածքի պատմական *Աղահեճ* կամ *Աղահեճք* գավառանվան հետ: Վերջինս հնչյունափոխվել է Արցախ-Սյունիքի բարբառի հնչյունափոխության օրենքներով՝ հնչյունափոխությունների հետևյալ շղթայով՝ *Աղահեճ > Ալահեճ > Լահեճ > Լահեճ(ին) > Լահճ(ին) > Լաճ(ին) > Լաչին*: Հնչյունափոխության վերջին աստիճանը, թերևս, պայմանավորված կարող է լինել նաև ժողովրդական ստուգաբանությամբ թուրքերեն *լաչըն* («բազե») և Արցախ-Սյունիքի բարբառում առկա համանուն *լաչին* («բարձրահասակ, սլացիկ») բառերի նմանությամբ:

1994

ՀԱՅԱՀՈՒՆՉ ԵՎ ՀԱՅԱՇՈՒՆՉ ՇՈՒՇԻ

Շուշի բերդաքաղաքի՝ մեր պատմության ու մշակույթի նվիրական ոստանի անվան ստուգաբանության թերևս ամենաարժանահավատ տարբերակը տեղանունը Արցախի բարբառի շուշ («ծառի ընձյուղ», «բարձր տեղ», «բարձունք») բառից բխեցնելն է: Այս բառը հայերենի բարբառներում դրսևորվում է նաև շուշ («ուղիղ բարձրացած, ուղղաբերձ») և շիշ («ծառի կատար») ձևերով: Քանի որ Արցախի բարբառում միավանկ բառերի ու ձայնավորը հնչյունափոխվում և դառնում է *օ* (կուժ-կոժ, սուտ-սոտ, տուն-տոն, փուշ-փոշ և այլն), հավանաբար բառի նախնական շուշ տարբերակից է բարբառում առաջացել շուշ ձևը: Վերջինից ակնհայտորեն բխում է նաև Շուշիից ոչ հեռու գտնվող Շուշ գյուղի անունը:

Հազարամյակներ շարունակ անառիկ ամրոց եղած, ապա ավելի ուշ շրջաններում բերդաքաղաք դարձած Շուշիի աշխարհագրական դիրքն էլ է հուշում, որ այդ անունը քաղաքը ստացել է հենց շրջակայքի վրա իշխող դիրքի պատճառով:

Շուշ (*շուշ*, *շիշ*) բառը թեև գրաբարում ավանդված չէ, սակայն, ըստ երևույթին, պատկանում է այն բառերի թվին, որոնք հին հայերենում *իւ* երկբարբառ են ունեցել և

բարբառներին են անցել *ի* կամ *ու* պարզ ձայնավորներով. ինչպես հինհայերենյան *ալիւր* բառի դիմաց բարբառներում առկա են *ալուր* և *ալիր* բարբառային ձևերը, *սին* բառի դիմաց՝ *սուն* և *սին*, *հարիւր* բառի դիմաց՝ *հարուր* և *հարիր* ձևերը, այնպես էլ *շիւշ* բառի դիմաց առկա են *շուշ* և *շիշ* ձևերը: Ի դեպ, *շոշ*, *շուշ* տարբերակները «ծառի ընձյուղ», «բարձր տեղ» նշանակություններով առավելապես տարածված են Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներում, իսկ *շիշ* տարբերակը՝ Հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի տեղաբնիկ բարբառի (Ճահուկ-Վայքի միջբարբառ) խոսվածքներում՝ «ծառի կատար» նշանակությամբ:

Փաստորեն, անցյալում ամրոցի կրած *Շուշի բերդ* կամ *Շոշի բերդ*, *Շոշի դալա*, *Շոշի սղնախ*, ինչպես նաև *Քարագլխի բերդ* անունները հավասարազոր են, քանզի բոլորն էլ ունեն «բարձունքի ամրոց» իմաստը, և դրանցում ակնհայտորեն նկատի է առնված հենց *Շուշի* աշխարհագրական դիրքը:

Վերջին մի քանի դարերում բերդաքաղաք դարձած *Շուշի*ն շարունակել է կրել բերդի անունը՝ սեռական հոլովով. ի դեպ՝ միջնադարյան ձեռագրերում ավանդված են քաղաքանվան ոչ միայն *ի* հոլովիչով *Շուշի*, այլև *ու* հոլովիչով *Շուշու* և *ո* հոլովիչով *Շուշոյ* ձևերը:

Մի քանի խոսք նաև «ադրբեջանական» *Շուշա* ձևի մասին: Իրականությունն այն է, որ հայկական տեղանունների սեռական հոլովը և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ բարբառների մեծ մասում կազմվում է

առավելապես *ա* հոլովիչով (Երևան-*Երևանա*, Վան-*Վանա*, Ճահուկ-*Ճահկա*, Գարդման-*Գարդմանա* և այլն), ուստի, անկասկած, Շուշին ունեցած պետք է լինի նաև *Շուշա* սեռականաձև տարբերակը, որի վկայությունն է այսօր էլ Արցախի բարբառում կիրառական *Շուշվա* ձևը: Հետևաբար, հիասթափեցնենք ամեն հայկականը կլանել ցանկացող աղբբեջանական էլուզակներին (մանավանդ՝ դավադիր հանձնումից հետո առաջին անգամ քաղաքում հայտնված և հայերեն Շուշի ձևը սնապարծ և ամբարտավան կեցվածքով ծաղրող՝ իրենց առաջնորդին), որ *Շուշա* տարբերակը ամենևին էլ կապ չունի աղբբեջաններեն *շուշա* («ապակի») բառի հետ, ինչպես իրենք են կարծում (ըստ աղբբեջանական «ստուգաբանության»՝ քաղաքն իր անունը ստացել է իբր «ապակու նման» մաքուր օդ ունենալու պատճառով. ենթադրենք, որ կարելի է կարծել, թե աշխարհի բոլոր ապակիները մաքուր են, բայց *մաքուր* բառը որևէ տրամաբանությամբ կարելի՞ է համեմատել... ապակու հետ): Սակայն ստի ոտքերը այս անգամ էլ են կարճ, քանզի դրա հեղինակները «մոռանում են», որ պարսկերենից փոխառյալ *շուշա* («ապակի») բառի երկու ձայնավորներն էլ իրենց լեզվում քմային են, իսկ քաղաքի՝ իրենց անվանման ձայնավորներից... ոչ մեկը քմային չէ:

Այլապես, ստացվում է, որ թուրքերն էլ նույն անտրամաբանական տրամաբանությամբ կարող են *Վանա բերդ* ձևը թուրքերեն համարել, իսկ *Վանի բերդ* տարբերակը՝ հայերեն⁶:

Ադրբեջանցիները հայկական տեղանունները ադալադելու և յուրացնելու շատ ակնհայտ մոլուցք ունեն: Ի դեպ, բոլորովին պարտադիր չէ, որ իրենց «ճաշակով» հորինված այդ նոր անունը որևէ տրամաբանական բովանդակություն ունենա: Օրինակ՝ Նախիջևանի *Շահապոնք* կամ *Շահապոնս* բերդաքաղաքը, որը հազարամյակներ շարունակ հայտնի Շահապունի տոհմի ամրոցն է եղել, դարձրել են *Շահբուզ* (պարսկերեն՝ *շահ* («թագավոր») և թուրքերեն *բուզ* («սառույց») բառերից, բառացիորեն ստացվում է իմաստագուրկ և անհեթեթ մի բան՝ «թագավորի սառույց»), պատմական Ուտիքի *Խաղխաղ* գավառանունը դարձրել են *Ղազախ* (իբր սա էլ թյուրքական *ղազախ* ցեղանունից է «բխում»), *Տավուշը* դարձրել են *Թովուզ* («կապելով» քրդերեն՝ *թավուս* («սիրամարգ») բառի հետ), այս նույն սկզբունքով, ի դեպ, Արցախի պարսկերեն պատմական անվանումներից մեկը՝ *Առան-է քաղը* («անտառային Առան») դարձրել են *Ղարաքաղ* («սև այգի»):

Շուշին ոչ միայն մեր նորօրյա ազատամարտի խորհրդանիշն է, այլև մեր հնամյա պատմության ու մշակույթի հավերժող առասպելը, իսկ նրա բոլոր անվանումները՝ հայերեն թե օտար, հայահունչ են և հայաշունչ:

2021

ՄԵՐ ՏՈՀՄԻԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒԴԸ

Անձնանունները ժողովրդի ներաշխարհի յուրօրինակ դրսևորումներն են: Հայերս, աշխարհի մյուս ժողովուրդների նման, ունենք մեր հոգևոր կերտվածքին, անցյալի հիշատակներին ու ապագայի իդձերին համահունչ անձնանուններ, որոնք մեզ համար պատմություն, արմատներ, արյան կանչ են և ոչ սոսկ մարդկանց իրարից զանազանելու համար հորինված հնչյունախմբեր:

Ականավոր հայագետ Հրայցա Աճառյանն ասել է. «Ոչ մի բան այնքան հավատարիմ կերպով չի ներկայացնում մեր պատմական կյանքի ելնեջները... և մեր ներքին ձգտումները, որքան հատուկ անունները»: Հայոց անձնանունները, իրոք, լինելով մեր ազգային արժեքների անբաժան մասը, մեծ խորհուրդ ունեն իրենց մեջ, քանզի ճշտորեն արտահայտում են մեր ժողովրդի անցած պատմական երկար ճանապարհի ողջ անցուղարձը, նրա բոլոր սրբություններն ու հիշատակները:

Բազում անձնանուններ է կիրառել մեր ժողովուրդը իր գոյության հազարամյակներում, սակայն նրանցից ոչ բոլորին է բախտ վիճակվել բյուրեղանալու և

մեր ազգային հիշողության մեջ մնալու որպես հայկական տոհմիկ անձնանուն:

Հայոց անձնանունների մի մասի արմատները սկիզբ են առնում բույսերի ու կենդանիների պաշտամունքի վաղնջական ժամանակներից՝ Եզնիկ, Գառնիկ, Այծեմնիկ, Առյուծ, Արծվիկ, Հեղնար, Վարուժան, Ասպուրակ, Ասպրամ, Սոսե, Շուշան...

Անունների մի շերտ էլ կրակին, լույսին ու արևին երկրպագող մեր նախնիների հին հավատքի նշխարներն են՝ Արեգ, Լույս, Հրայր, Հրանուշ, Հրարփի, Արևհատ, Արևշատ, Արշալույս, Արփիար...

Հայոց հեթանոսական դիցանուններ և նրանցից ծնված անձնանուններ՝ Արամազդ, Անահիտ, Աստղիկ, Նանե, Վահագն, Տիրան, Տրդատ, Միհրան, Միհրդատ, Մերուժան, Նար, Նարե, Նարինե...

Մեր նախահայրերի ու մեծերի նվիրական անունները՝ Թորգոմ, Հայկ, Արմենակ, Գեղամ, Արամ, Արա, Շավարշ, Պերճ, Պարույր, Հրաչյա...

Մեր սրբազան լեռների ու գետերի, հնամյա քաղաքների անունները՝ Արարատ, Մասիս, Միս, Արաքս, Միփան, Վան, Սասուն, Տարոն, Վարազ, Անի...

Եվ անունների այս աստղաբույլերի մեջ առավել շողշողուն ու հզոր՝ Հայկ, Տիգրան, Մեսրոպ, Վարդան, Գարեգին, Անդրանիկ... Ամեն անուն՝ սրբագործված մեր ժողովրդի արժանավոր գավակներից մեկի սխրանքով, մեր հնամյա պատմության հերոսական մի դրվագով,

դարերի խորհրդով, ամեն անուն՝ մեր հույզերի ու հույսերի թարգման ու խորհրդանիշ...

Մեր անձնանունների մեջ որոշակի տեղ են գրավում նաև հնագույն շրջաններում, հիմնականում հավատքի ընդհանրության պատճառով մեզ ցեղակից և դրացի ժողովուրդներից փոխառված և վաղուց ի վեր ազգայինի արժեք ստացած անուններ. հունական ծագումով Գրիգոր («արթուն, զվարթ»), Գևորգ («երկրագործ»), Եվգինե («բարեձնունդ»), Արսեն («առնական») ... պարսկական ծագումով՝ Բագրատ («աստվածատուր»), Արշակ («արջուկ»), Գուրգեն («գայլիկ»), Խոսրով («բարեհամբավ»), Խորեն («արևիկ») ... եբրայական ծագումով՝ Աննա («շնորհալի, ողորմած»), Սամվել («Աստված լսեց»), Մանվել («Աստված մեզ հետ»), Թամար («արմավենի») և այլն:

Ունենք նաև համեմատաբար ուշ շրջաններում հայերենի բառապաշարով և լեզվամտածողությամբ ստեղծված անձնանուններ՝ Լուսավարդ, Արփինե, Լուսինե, Սիրարփի, Սերինե, Հայարփի, Արմինե, Ժիրայր, Քաջայր և այլն:

Հայ ժողովուրդը, ի թիվս ազգային այլ հիշատակների, սրբորեն պահպանում և սերնդեսերունդ է փոխանցում իր ավանդական անունները: Այսօր հատուկ գործվանքով և երկյուղածությամբ են կիրառվում մեր արևածին նախասկիզբը խորհրդանշող արարիչ և արևի աստված Արայի, մեր ժողովրդի անվանադիր նահապետ աղեղնավոր Հայկի, մեր առաջին համախումբ պետա-

կանությունը ստեղծող Արամ արքայի, մեր արքայից արքա, աշխարհակալ Մեծն Տիգրանի, հանուն հավատոց և հայրենյաց հերոսամարտի առաջնորդ քաջն Վարդանի, մեր ժողովրդական պաշտելի հերոս գորավար Անդրանիկի, մեր արիական ոգու վերաթնացած առասպել, սպարապետ Գարեգին Նժդեհի անունները... Սակայն, ցավոք, ոչ բոլորն են գիտակցում անձնանվան հոգևոր արժեքը: Պարզվում է, որ որոշ դեպքերում՝ օտար ափերում ապրող սփյուռքահայը իր զավակին տալիս է հայկական անուն, իսկ հայաստանաբնակ որոշ հայեր՝ անբացատրելի մի մղումով նախընտրում են օտար, որոշ դեպքերում անզամ աղավաղված անուններ:

Իհարկե, վաղուց անցել են անունների համատարած օտարամոլության ժամանակները: Այսօր, օրինակ, ծիծաղելի և զավեշտական կինչի, եթե մեկն իր երեխային կոչի միջնադարում հայերի կողմից մասամբ կիրառված օտար անձնանուններով, ասենք՝ Խամուշ, Ամիրդովլաթ, Իկտիշ, Ղադամդուդու, Ջանգիշ, Թուրանշի կամ թեկուզ մինչև քսաներորդ դարասկիզբը Հայաստանում ոչ պակաս գործածական անուններից՝ Բալաբեկ, Ալիխան, Աղաջան, Ջավահիր, Գյուլնագ, Ազիզյուլ և այլն, էլ չենք խոսում խորհրդային կարգերի «արշալույսին» մեր իրականություն ներխուժած Լենդրոշ, Վիլեն, Մելս, Նինել, Սոցկառ և նման այլ անհեթեթությունների մասին: Այսօր, մեր լեզվին բնորոշ ինքնամաքրման և ինքնահստակեցման հատկության շնորհիվ անցել են նաև Էմմաների, Ամալյաների, Լաուրաների, Ջեմմաների, Ռու-

դոլֆների ու Էմիլիաների, առավել ևս կեղծ Նապոլեոնների, Շեքսպիրների, Վորոնցովների, Բիսմարկների, Պուշկինների, Կոպեռնիկոսների ու Հումբոլտների ժամանակները, թեև երբեմն աշխարհ են գալիս նորընծա Սյուզիներ, Մարիաննաներ, Ալեններ, Անրիներ, Լեոներ...

Այսօր մեր ժողովրդի մեծագույն մասը ձգտում է զավակներին կոչել հայկական անուններով, որի համար անհրաժեշտ են համապատասխան տեղեկատուներ և անվանացանկեր: Սակայն պարզվում է, որ նման գրականությունը սահմանափակվում է սոսկ Հայաստանի նախարարների խորհրդին առընթեր նախկին տերմինաբանական կոմիտեի առաջարկած «Զագսերին հանձնարարվող անվանացույցով», որում, սակայն, որպես հայկական անձնանուններ է ներկայացված անունների խայտաբղետ մի բազմություն՝ «իբրև հայկական գիտակցվող» անունների շարքում տեղ են գտել նաև այնպիսի անուններ, որոնք բառի բուն իմաստով կարող են մոլորության մեջ գցել հայկական անձնանուն փնտրողներին՝ Աղասի, Բաղիշ, Բարխուդար, Կամո, Կարպիս, Օգսեն, Ռեհան, Ուստիան... Եվ առավել զարմանալին այն է, որ անունների ճիշտ ձևերի կողքին, որպես ինքնուրույն անուններ՝ հանձնարարվում են նաև կրճատ կամ փաղաքշական ձևեր՝ Բենիկ, Ավետ, Գարիկ, Ծատուր, Անիկ, Մանուշ, Կոստան, Համո և այլն:

Այսօր լիարժեք անվանացույց-տեղեկատուի կարիք կա, մանավանդ որ մեր ժողովրդի մեջ նկատվում է

նան հին սխալներ, անճշտություններ ունեցող և ոչ ավանդական-հայկական անձնանունների ճշտման, ուղղման և փոխելու միտումներ: Մանավանդ որ անկախ հայրենիքի անձնագրեր ստանալու առիթը եզակի հնարավորություն կարող է տալ դրա համար: Եվ, իհարկե, ճիշտ կլիներ, եթե Հայաստանի Հանրապետության խորհրդարանի համապատասխան հանձնաժողովը անձնագրերը փոխանակելու նախօրյակին քննարկեր հայկական անձնագրերում անունների, ազգանունների, հայրանունների անճշտություններն ուղղելու, օտար, կրճատ, աղավաղված անունները հայկականով փոխարինելու հնարավորությունները: Լավ կլիներ նաև, որ այդ փոփոխությունները օրենքով հայտարարված որոշակի «բաց դռների օրերի» կատարվեին՝ առանց քաջքշուկի, պարզեցված ձևով, ասենք՝ փոփոխությունը նշվեր միայն անձնագրային քարտերում. Ժորժիկները փոխարինվեին Գևորգներով, Սերժիկները՝ Սարգիսներով, Ժենյաները՝ Եվգինեներով և այլն: Դա է թելադրում մեր ժողովրդի մեջ հազարամյակներում ձևավորված առանձնահատուկ վերաբերմունքը իր անձնանունների, ընդհանրապես՝ իր ազգային հատուկ անունների նկատմամբ:

1994

ԱՐԺԱՆԻ ԼԻՆԵՆՔ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԼՈՒՑՄԻՆ

Հայերենի ուղղագրության միասնականացման հարցի առնչությամբ մամուլում, հեռուստատեսությամբ և ձայնասփյուռով բուռն բանավեճեր ծավալվեցին ինչպես 1988-ի մեր համազգային զարթոնքին նախորդող, այնպես էլ հաջորդող տարիներին: Սակայն առ այսօր չլուծված է մնում այս հարցը, որ խորհրդային իշխանության «արշալույսին»՝ 1922 թվականին իրագործված «ուղղագրական ռեֆորմով» մեր լեզվին է փաթաթվել՝ ուղղագրական պատնեշով մեզնից բաժանելով ինչպես մեր դասական և հոգևոր գրականությունը, այնպես էլ սփյուռքահայ գրականությունն ու դպրությունը:

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առաջին տարբերակը նախատեսում էր վերահաստատել հայոց լեզվի ավանդական ուղղագրությունը, սակայն նրա խորհրդարանական քննարկումից ինչպես առաջ, այնպես էլ հետո, հակառակ կարծիքներ եղան պետական համալսարանի մի խումբ դասախոսների և նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի կողմից: Օրինակ՝ ավագ սերնդի լեզվաբաններից շատերը գտնում էին, որ դասական ուղղագրության վերականգնումը կհանգեցնի համընդ-

հանուր անգրագիտության (կարելի է կարծել, որ մեր լեզվի ներկա ուղղագրական կանոններին անխտիր տիրապետում են բոլորը, և տիրում է երանելի համընդհանուր գրագիտություն):

Ավելին, ուղղագրական դարձի հակառակորդները ներկա «կատարյալ» ուղղագրության գործերին անհարկի խառնվող «մեղավորներ» որոնեցին-գտան, և մամուլում, հեռուստատեսությամբ, ձայնասփյուռով ծայր առան անառողջ և անիմաստ բանավեճեր, միմյանց նկատմամբ անձնական վերաբերմունքից բխող ամենատարբեր մակարդակի ելույթներ:

«Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո վեճի մարման որոշակի միտում զգացվեց, մանավանդ որ օրենքը հայոց լեզվի ուղղագրության միասնականացմանը սատար կանգնելու դրույթ էր սահմանում: Սակայն վերջերս մեր գրողներից և ակադեմիկոսներից ոմանց՝ դասական ուղղագրության կողմնակիցների նկատմամբ խիստ անհանդուրժող կեցվածքը և մամուլում ուղղագրության դարձը պաշտպանողների նոր «հակահարվածները» խոսում են այն մասին, որ խնդիրը դեռևս հեռու է լուծումից:

Ամենագավեշտալին այն է, որ նոր ուղղագրության ջատագովները ոչ ազնիվ միտումնավորությամբ ավանդական ուղղագրությանն են վերագրում «արևմտահայերենի ուղղագրություն», «գրաբարի ուղղագրություն» բնորոշումները՝ մոռանալով, որ այդ ուղղագրությամբ են դարեր շարունակ գրել, իրենց ստեղծագործությունները

հրատարակել արևելահայ գրականության հսկաներ Ռաֆֆին, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, մեր մյուս մեծերը, որ ընդամենը տասնամյակներ առաջ դա էր համայն հայության միակ ուղղագրությունը:

Իսկ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ընդամենը վերանայել «ուղղագրական ռեֆորմը», ընդունել, որ ինչպես ոչ ոք իրավունք չունի հեղաշրջմամբ արհեստականորեն փոխելու լեզվի բառապաշարը կամ քերականական կանոնները, այնպես էլ 20-րդ դարի «նորարարները» իրավունք չունենին հեղափոխական եղանակով փոխելու լեզվի ուղղագրության հազարամյակների ավանդույթները: Լեզվի կանոնները, ներառյալ նաև ուղղագրությունը, փոփոխվում են բնականոն զարգացմամբ, ուստի և ճիշտ կլինի առաջին հերթին չեղյալ հայտարարել տխրահռչակ «ռեֆորմը»:

Փոխզիջման անհրաժեշտ այս միակ ճիշտ քայլը կատարելուց հետո միայն վիճող կողմերը կգտնեն խնդրի արդարացի լուծումը: Դա կլինի, օրինակ, փուլ առ փուլ վերադարձ ավանդական ուղղագրությանը, կամ էլ, ասենք, երկարաժամկետ երկու ուղղագրությունների զուգահեռ կիրառություն՝ մինչև ավանդականի լիարժեք վերահաստատումը: Իսկ թե ավանդական ուղղագրության որ տարբերակը կընտրվի, կորոշի հեղինակավոր լեզվաբաններից կազմված հանձնաժողովը (այս դեպքում, իհարկե, հնարավոր են փոխզիջումներ, ավանդական ուղղագրության բարեփոխումներ և այլն):

Իսկ մինչ այդ կուգեինք մեկ անգամ ևս դիմել ուղղագրության վերադարձն ամեն կերպ խոչընդոտողներին. եթե համայնավարներին հաջողվեր մեր ժողովրդից խլել մաշտոցյան գիրը (իսկ նման ծրագրեր, ինչպես հայտնի է, գոյություն ունեցել են), մեզ պարտադրվեր սլավոնական, լատինական կամ, ասենք, արաբական գիրը, մի՞թե այսօր նույն նախանձախնդրությամբ նրանք կխոչընդոտեին մեր ազգային հինավուրց այբուբենի վերականգնումը՝ վերադարձը համարելով հետադիմություն, իրենց դարն ապրած «հիերոգլիֆների» վերածննդն ժամանակավրեպ փո՞րձ. մի՞թե դժվար է մեր ավանդական գրությունը յուրացնել ընդամենը մի քանի տասնյակ կանոնների իմացությամբ. մի՞թե անկախ հայրենիքի գոյության պայմաններում ևս մեր ժողովրդի բաժան-բաժան եղած բեկորների, մեր դասական գրականության ժառանգության, մեր եկեղեցու և մեր միջև պետք է շարունակի գոյատևել նույն ուղղագրական անջրպետը, սփյուռքի հայր օտար հողի վրա պահպանի հայեցի գրելաձևը, իսկ մենք՝ հայրենաբնակներս, ոչ մի՞թե կրկին պետք է հանդուրժենք մեր հինավուրց լեզվի նսեմացումը, նրա ուղղագրական կանոնների հարմարեցումը թույլ հիշողություն ունեցողներին, մի՞թե մեր զավակներին պետք է շարունակենք կրթել շինծու և պարտադրված այս ուղղագրությամբ, նրանցից պահանջենք օտար լեզուների գրության և արտասանության կանոնների ճշգրիտ իմացություն՝ գրկելով, սակայն,

մեսրոպյան նախաստեղծ գրության աստվածապարզև լույսից...

Միթեների այս շարքը, որ կարելի է անվերջ շարունակել, ավարտենք լուսահոգի Ռաֆայել Իշխանյանի երիցս իրավացի խոսքերով. «...Դասական ուղղագրութեանը վերադառնալու խնդիրը հեշտի կամ դժուարի հետ չէ, որ առնչուած է: Դասական ուղղագրութիւնը հայ մշակոյթի մի անբաժան մասն է, որ մեր ժողովրդից խլուեց 1922 թվականին: Ինչպէս որ այժմ ջանում ենք վերականգնել մեր ազգային դպրոցը, հայոց ճշմարիտ պատմութիւնը, հայկական շատ սովորութիւններ, սոներ, ազգային մտածողութիւնն առհասարակ, այդպէս էլ ճիշտ կլինի վերականգնել մեր դարաւոր ազգային ուղղագրութիւնը»:

1993

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	5
Ճիշտ և սխալ	
Գազաթաժողո՞վ, թե՞ գազաթնաժողով	9
Հրավերը դեռևս հրավերք չէ	11
Տառ՞ւշ, թե՞ Տավուշ	13
Չաղավաղենք մարզերի անունները	15
Նախագահը՝ նախագահ, ատենապետը՝ ատենապետ	18
Տնտեսվարո՞ղ, թե՞ տնտեսավարող սուբյեկտ	20
Սուրբ Ղազանչեցո՞ց, թե՞ Սուրբ Ամենափրկիչ	22
Զնաբե՞րդ, թե՞ Ազնաբերդ	24
Պարո՞ն, թե՞ տիար	27
Այդ չարաբաստիկ «այլոքը»	29
Կաթնամթերքների մոռացվող անունները	31
Գեղեցկուհի՞, թե՞ ... «միս»	33
Պահպանենք... մեր հայրանունները	35
Հանիրավի նախանձախնդրություն	37
Արտասովոր մի վրիպակի մասին	39
<i>Յան</i> վերջավորությամբ պարսկական ազգանունների տառադարձման մասին	41

Հանուն անաղարտ հայերենի

Երկրանունների տառադարձման շուրջ 47
Երկյուղածություն մեր տոհմիկ տեղանունների հանդեպ 51
Հայկակա՞ն է արդյոք *Հաչին* տեղանունը 55
Հայահունչ և հայաշունչ Շուշի 58
Մեր տոհմիկ անունների խորհուրդը 62
Արժանի լինենք մեսրոպյան լույսին 68

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, գրող, թարգմանիչ Արտակ Վարդանի Վարդանյանը ծնվել է 1951թ. մայիսի 4-ին Նախիջևանի Ազնաբերդ գյուղում:

1973թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը, 1988-ին՝ նույն ինստիտուտի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի լրագրության բաժինը (գերազանցությամբ): 2004 թվականին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Վայոց ձորի խոսվածքների լեզվաաշխարհագրական բնութագիրը» թեմայով: Ուսումնասիրել է հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի խոսվածքները (Ճահուկ-Վայքի միջբարբառ), պատմական Գողթնի հյուսիսային խոսվածքները (Հյուսիսային Գողթնի միջբարբառ), կազմել է Նախիջևանի բարբառային քարտեզը:

Հեղինակ է 19 գրքի, այդ թվում՝ 4 մենագրության, շուրջ հինգ տասնյակ գիտական հոդվածների:

1996-1998 թվականներին եղել է «Նախիջևան» հայրենակցական միության նախագահը:

Ունի ՀՀ քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

Հայաստանի լրագրողների միության և գրողների միության անդամ է:

Պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով (2011), ՀՀ նախագահի շնորհակալագրով (2007), Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալով (2011):

ISBN 978-9959-970-00-4



9 789939 970004